ԼՄԲԱՏԱՎԱՆՔ (ԼՄՊԱՏԻ ՎԱՆՔԻ ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ)

Լիանա Ավետիսյան

Հայաստանի սրբավայրերի մեջ իրենց ուրույն տեղն են զբաղեցնում Ս. Ստեփանոս Նախավկա անունը կրող եկեղեցիները: Հատկապես հայտնի են Դարաշամբի, Կոշի, Մաստարայի, Սառնաղբյուրի, Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցիները և այլն: Սույն հոդվածում կներկայացվեն Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու ներկայիս նկարագիրը, ուխտագնացությունը և գործառույթները: Հոդվածում բերված ամբողջ նյութը հիմնված է հեղինակի կողմից կատարած ազգագրական հետազոտության ընթացքում գրանցած և 2017 թ. ուխտագնացության անմիջական մասնակցության ընթացքում ստացված տեղեկությունների հիման վրա[1]:

Լմբատավանքը գտնվում է Արթիկ քաղաքից 1.5-2 կմ հարավ-արևմուտք, բարձունքի լանջին՝ Լմպատ թաղամասում: Տարբեր ժամանակներում արթիկցիները տարբեր կերպ են անվանել Լմբատավանքը՝ Լմպատի վանք, Կարմիր վանք, Հրաշագործ վանք[2], Ս. Ստեփանոս եկեղեցի: Լմբատավանքի վանական համալիրում պահպանվել է միայն Ս. Ստեփանոս եկեղեցին: Լմբատավանքը Թ. Թորամանյանը թվագրում է VII դ[3]: Այն խաչաձև գմբեթավոր, միախորան եկեղեցի է՝ կառուցված սրբատաշ տուֆ քարերով: Եկեղեցին հարուստ է հիմնականում XI-XIII դդ. նվիրատվական արձանագրություններով, սակայն շինարարության մասին տեղեկություններ չկան: Վ. Հարությունյանը նշում է, որ չնայած այն բանին, որ եկեղեցու արձանագրությունները սկսվում են XI դարից և ունեն տարբեր բովանդակություն, սակայն դրանցից ոչ մեկում վկայություններ չկան կառուցման վերաբերյալ: Եկեղեցու կառուցման առավել հավանա-

---

[1] **Լ. Ավետիսյան, Կ. Հովհաննիսյան,** Դաշտային ազգագրական նյութ (հետագայում՝ ԴԱՆ), Շիրակ, Արթիկ, 2017:

[2] Նույն տեղում:

[3] **Թ. Թորամանյան**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Ա, էջ 310:

կան ժամանակը նա նշում է VII դարը[1]: Տվյալ դարով թվագրելու օգտին են խոսում եկեղեցու ճակատների մշակման ճարտարապետական լուծումները (քիվեր, լուսամուտների քանդակազարդ պսակներ), թմբուկի ութանիստ ծավալաձևը և այլն:

Եկեղեցին բավականին փոքր է, նրա կողքին կառուցված է խորանով փոքրիկ շինություն՝ մոմավառության համար, ևս մեկ սեղան էլ կառուցված է եկեղեցու դիմաց: 1955 թ. իրականացվել են մաքրման ու բարեկարգման աշխատանքներ, և հայտնաբերվել են եկեղեցու արևմտյան խաչթևին կից, նրա հարավակողմում մի այլ շենքի խորանի և արևմտակողմի շքամուտքի մնացորդներ, խաչքարերի լայն պատվանդան՝ վրան երկու խաչքար՝ առանձին պատվանդաններով: Բացվել են նաև խոշոր դամբարանի պատերի հիմքեր, IX-X դդ. բնորոշ գերեզմանաքարեր, եկեղեցու շենքին պատկանող երեսապատման քարեր, քիվեր, տանիքի սալաձև և կիսախողովակաձև կղմինդրներ, լուսամուտների քանդակազարդ շրջանակներ, ինչպես նաև խաչքարերի քանդակազարդ բեկորներ, կավե զանազան ամաններ, մի մասը՝ ջրանակապատ ու գունազարդ, մետաղյա գործիքներ և այլ իրեր, որոնք պատկանում են VII- XIII դդ.[2]:

Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու VII դ. կառույց լինելու փաստերը նաև տվյալ ժամանակաշրջանին բնորոշ որմնանկարներ են: Լմբատավանքը հարուստ է գեղեցիկ որմնանկարներով, որոնք զբաղեցնում են ավագ խորանի գմբեթարդը և դրան հարող արևելյան և արևմտյան պատերը: Գմբեթարդում երևում է հրե լեզուների խորքի վրա պատկերված Քրիստոսի մարգարտազարդ գահը, որը դրված է ծիածանակամարի վրա: Վերջինս եզերված է կանաչ, սպիտակ, կարմիր երիզներով, և մի մեծ լուսապսակի պես առանձնացնում է գահակալ Քրիստոսի պատկերը, որի միայն ստորին մասն է պահպանվել: Ծիածանակամարից դուրս, կենտրոնական պատկերի աջ և ձախ կողմերում նկարված են երկու քառակերպ (տետրամորֆ)՝ մարդու, եզան, առյուծի և արծվի գլխով, երկու սերովբե և երկու զույգ անիվներ: Հատկապես լավ են պահպանված քառակերպերը, որոնց չորս ճերմակ թևերը ծածկված են բաց աչքերով: Ավագ խորանի կողային պատերին պատկերված են դեպի

---

[1] **Վ. Հարությունյան**, Հայկական ճարտարապետության պատմություն, էջ 155-156:

[2] **Հ. Եղիազարյան**, Շիրակի լեռնահովտի պատմական հուշարձանները, Երևան, 1975, էջ 32:

կենտրոն շարժվող երկու հեծյալներ՝ Ս. Սարգիսը և Ս. Գևորգը (՞- Լ. Ա.): Նրանք ձեռքերին ունեն խաչափայտ, բայց ձիերի սմբակների տակ չկան չար ուժեր մարմնավորող պատկերներ: Լմբատավանքի որմնանկարներն ստեղծված են գլխավորապես Հին Կտակարանի բնագրերի՝ մասնավորապես Եզեկիել մարգարեի տեսիլքի (Եզեկ. 1:1-28) գրական հիմքի վրա[1]:

2013 թ. որմնանկարների վերականգնման համար Հայաստան են այցելել իտալացի մասնագետ՝ Քրիստին Լամուղեն և ճարտարապետ Արա Զարյանը, և այսօր արդեն նրանք ավարտին են հասցրել եզակի որմնանկարներից մեկի՝ անհայտ հեղինակի կողմից կատարված Եզեկիել մարգարեի տեսիլքի որմնանկարի վերականգնման և ամրակայման աշխատանքը: Հետագայում նախատեսում են համապատասխան միջոցների առկայության դեպքում շարունակել մյուս որմնանկարների վերականգնման աշխատանքները:

Լմբատավանքի արձանագրություններին անդրադարձել և մի մասը հրատարակել են Ս. Ջալալյանցը[2], Ղ. Ալիշանը[3], Հ. Եղիազարյանը[4], իսկ Ս. Բարխուդարյանը արձանագրությունները հրատարակել է ամբողջությամբ[5]:

Եկեղեցու վրա պահպանված 1191 թ. մի արձանագրության համաձայն[6], Վահրամ Պահլավունու որդի Տեր Բարսեղը դրամով գնում է վանքը «անօրեններից», վերադարձնում հնուց նրան պատկանող ջուրը և վանքին է նվիրում Ցիցք գյուղը: Այդ արձանագրությունից կարելի է կռահել, որ Լմբատավանքը նույնպես, ինչպես Շիրակի մյուս վանքերը, ենթարկվել է սելջուկների հարձակումներին և որոշ ժամանակ դարձել նրանց սեփականությունը: Նույն արձանագրությունից պարզվում է նաև, որ Լմբատավանքը նախքան սելջուկյան արշավանքները եղել է Պահլա-

---

[1] **Կ. Մաթևոսյան**, Որմնանկարչությունը ՀՀ Պետական պատկերասրահում, Երևան, 1990, էջ 17-18:

[2] **Ս. Ջալալյանց**, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 218-221:

[3] **Ղ. Ալիշան**, Շիրակ, տեղագրութիւն, պատկերացոյց, Վենետիկ, 1881, էջ 164-166:

[4] **Հ. Եղիազարյան**, էջ 30-34:

[5] **Ս. Բարխուդարյան**, Դիվան հայ վիմագրության. պր. X, Շիրակի մարզ, Երևան, 2017, էջ 68-80:

[6] Արձանագրության բնագիրը տես. **Ս. Բարխուդարյան**, էջ 69:

վունի իշխանների սեփականությունը :

Սելջուկներից ազատագրելուց հետո Շիրակի գավառը և Լմբատավանքը Ս. Ստեփանոս եկեղեցու հետ նվիրվում է Զաքարյան իշխաններին: Այդ մասին են վկայում XIII դ. արձանագրությունները: Ս. Ստեփանոս եկեղեցում կատարվել են վերանորոգումներ XIII դ.՝ ամենայն հավանականությամբ Զաքարյան իշխանների կողմից: Այդ ընթացքում եկեղեցու հարավային և հյուսիսային պատերին կից ավելացվել են փոքրիկ խորան-մատուռներ:

Ըստ արձանագրություններից մեկի[1]՝ XIII դ. սկզբին Բշտկա թոռներ Գրիգորը և Մովսեսը վանքին են նվիրում Սառնաղբյուր գյուղը, որի դիմաց միաբանությունը խոստանում է նրանց հիշատակին ամեն տարի երկու խորաններում պատարագ մատուցել:

Պահպանվել են արձանագրություններ նաև խաչքարերի և տապանաքարերի վրա: Եկեղեցու մուտքի առաջ ագուցված է հետևյալ արձանագրությամբ խաչքար՝ Ո**ԽԴ (1195թ) /ԶՄԱՐԳԱՐԷՍ ԿԱԶՄՈ[Ղ]/ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ ՄԱՐԳ...**[2], արևելյան կողմում կանգնեցված է սև տուֆից խաչքար՝ գիրը խաչաթևերի մեջ **[ՄԽԻԹԱՐ ԱՐԹԻԿԻ[Ց]ԻՆ ՈՀԳ(1224) ԱՐ Տ]**[3]: Տապանաքարերի արձանագրություններից կարելի է ենթադրել, որ դրանք Լմբատավանքի առաջնորդ քահանաների տապանաքարերն են:

Ս. Ստեփանոս եկեղեցու վերջին արձանագրությունը կատարվել է 1251 թ.[4], ըստ որի կալվածքներ են նվիրաբերվել վանքին: Սրանից եզրակացնում ենք, որ դեռևս XIII դարի կեսերին Լմբատավանքը Ս. Ստեփանոս եկեղեցու հետ միասին կանգուն էր: Դրանից հետո, այս վանքի մասին ոչ մի տեղեկություն չունենք:

Լմբատավանքի Ս. Ստեփանոսի ուխտի օրը չի համընկնում Ս. Ստեփանոս Նախավկայի եկեղեցական տոնի հետ: «Ս. Ստեփանոսի տոնը թեև եկեղեցին նշում է դեկտեմբերի 26-ին, սակայն անբարենպաստ եղանակային պայմանների պատճառով շատ քիչ հավատացյալներ էին կարողանում հաղորդակից լինել և ստանալ սուրբ մասունքի օրհնությունը: Այդ իսկ պատճառով եկեղեցու խորանի և մկրտության ավազանի վե-

---

[1] **Ս. Բարխուդարյան**, էջ 73:

[2] Նույն տեղում, էջ 79:

[3] Անդ:

[4] **Ս. Բարխուդարյան**, էջ 77:

ռաօծման հետ կապված, ուխտի օրը փոխվեց հոկտեմբերի առաջին շաբաթ օրը, և արդեն երրորդ տարին է ինչ նշվում է այդ օրը»[1]: Այդ օրը Էջմիածնի Մայր Աթոռից Լմբատավանք է բերվում Ս. Ստեփանոսի մասունքը և պատարագ է մատուցվում: Սուրբ մասունքով կատարվում է Անդաստանի կարգ և մատաղի օրհնություն:

Տարվա ընթացքում Անդաստանի ծեսը կատարվում է հետևալ տոն օրերին. Տերնընդեզին (Տեառնընդառաջին), Ծաղկազարդին (Հիսուս Քրիստոսի Մուտքը Երուսաղեմ), Զատկին (Ս. Հարության տոնին), Նոր Կիրակի կամ Կրկնազատկին (Կանաչ-Կարմիր կիրակի), Զատկից հետո երրորդ և չորրորդ կիրակիներին, Սուրբ Խաչի Երևման տոնին (հինգերորդ կիրակի), Զատկից հետո վեցերորդ և յոթերորդ կիրակի - ներին, Քրիստոսի Համբարձման տոնին, Հոգեգալստյան տոնին, Կաթողիկե Ս. Էջմիածնի հաստատման տոնին, Վարդավառին (Տիրոջ Պայծառակերպության տոնին), Խաղողօրհնեքին (Ս. Աստվածածնի Վերափոխման տոնին) և Ս. Խաչին (Սուրբ Խաչի Վերացման տոնին, Խաչվերաց)[2]: Ինչպես տեսնում ենք Անդաստանի վերջին արարողությունը կատարվում է Խաչվերացին, և Խաչվերացից մինչև Տերնընդեզ Անդաստան չի կատարվում: Սակայն Լմբատավանքում Անդաստանի կարգը կատարվում է ուխտի օրը, և կապ չունի այդ տոներից որևէ մեկի հետ – կարելի է ասել, որ ուխտագնացության և անդաստանի այդպիսի ժամկետը զուտ տեղական բնույթ է կրում:

Արթիկի թեմի առաջնորդական տեղապահ Նարեկ վարդապետ Ավագյանի ձեռամբ կատարվեց Անդաստանի ծեսը: Նա ծեսի ընթացքում օրհնեց աշխարհի չորս ծագերը (կողմերը). արևելք՝ Հայոց հայրապետությունը, արևմուտք՝ Հայոց թագավորությունը (հանրապետությունը), հարավ՝ երկիրը, այգին, պտղաբերությունը և հյուսիս՝ բնակավայրերը և նրանց բնակիչները[3]: Անդաստանի ծեսն ունի եկեղեցու կողմից մշակված

---

[1] ԴԱՆ, Արթիկ, 2017, բանասաց՝ տեր Լևոն քահանա Հովհաննիսյան:

[2] **Ա. եպս. Ժամկոչյան, Կ. Հովհաննիսյան,** Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Անդաստանի ծեսը// Պատմություն և մշակույթ, Երևան 2016, էջ 485-486:

[3] Անդաստանի ծեսն ունի եկեղեցու կողմից մշակված իր արարողակարգը, որին մասնակցում են տվյալ եկեղեցում ծառայող բոլոր հոգևորականներն առանց բացառության, ըստ եկեղեցական աստիճանավորման: Անդաստանի ընթացքում կիրառվող զարդերն են. խաչվառը, ձեռաց խաչը, Ավետարանը, բուրվառը, մոմակալը, քշոցը: Տես. **Ա. եպս Ժամկոչյան, Կ. Հովհաննիսյան,** Հայաստանյայց Առաքելական Սուրբ

իր արարողակարգը, որտեղ հանդիսադիրը կատարում է ծեսը, իսկ ժողովուրդը չունի ակտիվ մասնակցություն: Սակայն Լմբատավանքի Ս. Ստեփանոսի անդաստանի ծեսը հետաքրքիր էր այն հանգամանքով, որ հանդիսադիրն այն կատարում էր եկեղեցու բակում, ամեն ծագի օրհնության ժամանակ ժողովրդի թափորը շարժվում էր հոգևորականների հետ նույն ուղղությամբ և նրանց հետ միասին բարձրաձայն երգում և աղոթում էր:

Լմբատավանքում Անդաստանի ծեսից հետո կատարվում է մատաղի օրհնություն: Մատաղ են անում գառ, ոչխար, աքլոր, երբեմն ցուլ (ցուլ մատաղ են անում հանրային մատաղի ժամանակ, և այն բաժանում են մանկատներին ու ծերանոցներին), աղավնի (հիմնականում աղավնիներին բաց են թողնում և կոչում են «ազատ մատաղ»), ինչպես նաև լավաշ (օրհնված լավաշը բաժանում են ժողովրդին կամ տանում են իրենց հետ): Ուխտավորները երեք անգամ պտտվում են եկեղեցու շուրջը և մոմեր վառում: Անդաստանի ծեսի ավարտից հետո հանդիսադիրը մասունքը դնում է խորանի դիմաց՝ ծածկած թաշկինակով, իսկ հավատացյալները մոտենում, համբուրում են սրբի մասունքը, ինչպես նաև թաշկինակներ, գլխաշորեր, հագուստներ են հպում մասունքին, ակնկալելով սրբի զորությունը և հովանավորությունը: Սակայն ժողովրդի մի մասի մոտ թաշկինակի գործածությունն անընդունելի է համարվում:

Լմբատավանք ուխտավորներ են գալիս ոչ միայն Արթիկից, Գյումրիից, այլև Հայաստանի տարբեր վայրերից: Ուխտին մասնակցում են տարբեր տարիքի և սեռի մարդիկ:

Վանք ուխտավորները գալիս են նաև ուրիշ նպատակներով՝ ցանկությունների, երազանքների կատարման, բանակում խաղաղ և անփորձանք ծառայելու ցանկություններով, իսկ ոմանք էլ պարզապես տոնին մասնակցելու: Ժողովրդի մեջ ավելի հայտնի Կարմիր վանքի (Ս. Ստեփանոս եկեղեցու ժողովրդական անվանումներից մեկն է) զորության մասին շատ փաստեր կան՝ շատ հիվանդներ են բժշկվել, երկար տարիներ երեխա չունեցողը՝ երեխա է ունեցել:

Ինչպես այս տարի, այնպես էլ անցած տարիներին ուխտագնացության ընթացքում եկեղեցու վերաշինման և բարեկարգման համար ցան-

---

Եկեղեցու Անդաստանի ծեսը, էջ 485-486: Ս. Ստեփանոս Նախավկայի Անդաստանին գործածվում է Ս. Ստեփանոսի պատկերով խաչվառ:

կացողները գումար էին հանգանակում: Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու տոնի օրը՝ եկեղեցի տանող ճանապարհին կազմակերպվում է տոնավաճառ՝ վաճառվում են աստվածաշնչյան գրքեր, հուշանվերներ, ձեռագործ աշխատանքներ, խաղալիքներ, քաղցրավենիք, մոմեր և այլ իրեր: Ուխտագնացության արարողության ավարտը վերածվում է մեծ տոնախմբության, ելույթ են ունենում «Լմպատ» երգի ու պարի մանկական խումբը, եկեղեցու երգչախումբը, այդ տոնակատարությանը ոգևորությամբ մասնակցում են նաև ուխտավորները:

ԼՄԲԱՏԱՎԱՆՔ (ԼՄՊԱՏԻ ՎԱՆՔԻ ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ)

Լիանա Ավետիսյան

Բանալի բառեր *- Լմբատավանք, Ս. Ստեփանոս եկեղեցի, ուխտ, մասունք, Անդաստան, Հանդիսադիր, մատաղ:*

Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցին պատմա-ճարտարապետական գեղեցիկ մի կառույց է, որը մինչև մեր օրերը պահպանվել է, և այսօր էլ կատարում է իր հոգևոր-ծիսական գործառույթները: Այսօր էլ Լմբատավանքն ունի հավատացյալ երկրպագուների մեծ խումբ, սակայն նրանց հոսքը դեպի վանք հատկապես մեծ է հենց ուխտի՝ հոկտեմբերի առաջին շաբաթ օրը: Այդ օրը Էջմիածնի Մայր Աթոռից Լմբատավանք են բերում Ս. Ստեփանոս Նախավկայի մասունքը, որով էլ կատարում են Անդաստանի ծեսը և մատաղ անում: Ուխտավորներ գալիս են Հայաստանի տարբեր վայրերից, որոնք բոլորն էլ տարբեր փափագներով և մեծ հավատով են մասնակցում ուխտին, մոմ վառում, մատաղ անում:

ЛМБАТАВАНК (ЦЕРКОВЬ СВ. СТЕПАНОСА ЛМБАТА)

Лиана Аветисян

Ключевые слова: Лмбатаванк, церковь Св. Степанос

Церковь Св. Степанос монастыря Лмбатаванк – это красивое историко-архитектурное строение, сохранившееся до наших дней. Сегодня эта церковь так же выполняет духовно-ритуальные функции. В наши дни у Лмбатаванка есть большая группа верующих посетителей, но поток паломников монастыря особенно велик в первую субботу октября. В этот день, который является днем паломничества к монастырю, из Эчмиадзинского Кафедрального собора в Лмбатаванк привозят реликвию Св. Степаноса Первомученика, при помощи

которой совершают церемонию *Андастан* и освящают жертвоприношения. Паломники приезжают из разных частей Армении с разными чаяниями и с большой верой участвуют в паломничестве, ставят свечи, приносят жертвы.

LMBATAVANK (ST. STEPHANOS CHURCH OF LMPAT)

Llana Avetisyan

Keywords: Lmbatavank, St. Stephanos church

St. Stephanos church of Lmbatavank is an attractive historical-architectural building that has been preserved and continues to carry out its religious-ritual functions. Lmbatavank has a big group of believers-followers, but generally their traffic to the church is increasing during the pilgrimage on the first Saturday of October. On that day relics of St. Stephanos are brought to Lmbatavank from the Mother Diocese of Echmiadzin; the relics are used in the ritual of *Andastan* and for blessing of sacrifices. Pilgrims arrive from different parts of Armenia, each of them participates in the pilgrimage with different wishes and high hopes, they light up candles and carry out oblations.